ԳԼՈՒԽ ԺԲ.

1920 ԹՒԻ ՍԿԻԶԲԸ

1920 թուականը Հայաստանի Հանրապետութեան համար սկսուեց ըստ ամենայնի նպաստաւոր պայմաններում: Ներքին կեանքում և սահմանների վրա տիրում էր համեմատական խաղաղութիւն: Երկրի բոլոր մասերում ժողովուրդը տարուած էր շինարարական աշխատանքով: Վերից վար, Խորհրդարանից սկսած մինչև վերջին գիւղական իշխանութիւնը՝ ամենքը համակուած էին իրենց պարտականութեան գիտակցութեամբ. պետութիւն էին ստեղծում: Եւ պետութիւնը օր օրի վրա զարգանում ու կատարելագործւում էր: Նրանք, որ տեսել էին Հայաստանը մի տարի առաջ, այլևս չէին ճանաչում. այնքա՜ն փոխուել էր ամէն ինչ՝ երկաթուղու կայարանից ու փողոցների տեսքից սկսած մինչև հասարակութեան ինքնազգացումը: Այլևս ոչ ոք չէր կասկածում Հայաստանի ապագայի մասին. ամէն ոք աշխատում էր ամրացնել նրա հիմքը, արագացնել վերաշինութիւնը:

Այս տրամադրութեան արտայայտութիւն կարելի է համարել իրար յաջորդող համագումարներն ու հասարակական հանդէսները, որոնք սկսուեցին 1920թ. առաջին օրերից: Արտակարգ ոգևորութիւն էր տիրում այդ հաւաքոյթներում, անյողդողդ հաւատ դէպի հայ ժողովրդի ստեղծագործական հանճարը, դէպի Հայաստանի ապագան:

Յունս. 4-ին, Երևանում, առանձին հանդիսաւորութեամբ, Խորհրդարանի ու կառավարութեան անդամների, հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչների և խուռն բազմութեան ներկայութեամբ, բացուեց Հայաստանի քաղաքների անդրանիկ համագումարը, որին մասնակցում էին Երևան, Ալեքսանդրապոլ, Կարս, Նոր-Բայազէտ, Աշտարակ և Ղամարլու քաղաքների ներկայացուցիչները:

Երևանի քաղաքագլուխ Մ. Մուսինեանը բանալով համագումարը և ընդգծելով, որ «մեր կեանքը մտնում է նորմալ հունի մէջ, և մենք կանգնած ենք վերաշինութեան ճամբի վրա»՝ պարզեց Հայաստանի քաղաքային ինքնավարութիւնների կատարելիք կարևոր դերը երկրի շինարարութեան մէջ: Ապա ողջոյնի ճառեր արտասանեցին վարչապետ Ա. Խատիսեանը, որ շեշտեց քաղաքների միութիւն կազմելու անհրաժեշտութիւնը, ներք. գործոց նախարար Ա. Գիւլխանդանեանը, որ ծանրացաւ քաղաքային ինքնավարութիւնների պետական դերի վրա, Խորհրդարանի դաշնակցական ֆրակցիայի